

ՀԱՆԳԻՍՏ  
Տ. ԲԱՐԳԵՆ ԱՐԲ. ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆԻ

1918-2000

Թիւ 3784  
Յուլիս 26, 2000

Ամենապատիւ  
Տ. Թորգոմ Արք. Մանուկեան  
Պատրիարք Երուսաղէմի Առաքելական Աթոռի  
Երուսաղէմ

Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայր,

Սրտի խոր ցաւով կը տեղեկացնենք թէ Հայաստանեայց Եկեղեցոյ երիցագոյն հոգեւորականներէն՝ Գերշ. Տ. Բարգէն Արք. Վարժապետեան, յետ երկարատեւ հիւանդութեան, ի Տէր հանգեաւ Երեքշաբթի Յուլիս 25-ի երեկոյեան:


Գերշ. Տ. Բարգէն Արք. Վարժապետեանի Տան Կարգը պիտի կատարուի Կիրակի, Յուլիս 30, 2000, երեկոյեան ժամը 7:00-ին՝ Չելթանհամ Փէնսիլվէնիոյ Ս. Երրորդութիւն Եկեղեցոյ մէջ: Թաղման Կարգն ու Վերջին Օծումը՝ Երկուշաբթի Յուլիս 31, առաւօտեան ժամը 10:00-ին՝ յընթացս Ս. Պատարագի:

Թելադրած ենք որ, Կիրակի Սեպտեմբեր 3-ին, մեր թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ մասնաւոր Հոգեհանգստեան Պաշտօն կատարուի՝ Տ. Բարգէն Արք. Վարժապետեանի վախճանման քառասունքին առիթով:

Հաճեցէք կցեալ գտնել Բարգէն Սրբազանի ամփոփ կենսագրականը:

Վախճանեալ Բարգէն Սրբազանի հոգիի հանգիստին համար կը խնդրուի Ձերդ Սրբազնութեան աղօթքը առ ամենաբարին Աստուած:

Մատչելով ի համբոյր Ձերդ Ամենապատուութեան Օծեալ Աջոյն  
Խղճաշիւղարար



Խաժակ Արք. Պարսամեան  
Առաջնորդ